




ՄԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ  
*St. Gregory of Narek Armenian Apostolic Church*



Մարտ 15, 1999

Գերաշնորհ՝  
 Տեր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան  
 Առաջնորդ Ամերիկահայոց Արևելեան Թեմի  
 630 Երկրորդ Պողոտայ  
 New York, NY 10016-4885

Յարգելի Սրբազան Հայր,

Այս գրութեամբ Ձեզի կը հաղորդեմ որ Եկեղեցոյս 1998 Տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ Կիրակի, Փետրուար 28, 1999 Ս. Պատարագէն վերջ, ժամը 1:00ին: Ներկայ էին իրենց լման տուրքերը վճարած հարիւր անդամներէն քառասուն եւ վեց զոյացնելով մեծամասնութիւն: **Օրուան դիւանը** կը բաղկանար Սթիւ Դաւիթեանէ որպէս Ատենապետ եւ Լիսա Ներսեսեան Բիշոփոսընէ որպէս Ատենադպիր:

Գաղտնի քուէարկութեամբ եկեղեցոյ **Ծխական Խորհուրդի** անդամ վերընտրուեցան հետեւեալ անձինք՝ Թոռ Բասարլ 42 քուէով, Արեկ Թորոսեան 38 քուէով, Անիթա Արփաճեան 29 քուէով, իսկ որպէս փոխանորդ Լիսա Ներսեսեան Բիշոփոսըն 20 քուէով:

**Ընտրողական Յանձնախումբի** անդամ ընտրուեցան՝ Ճիլ Մագուստեան 36 քուէով, Նինա Սեդրաքեան 40 քուէով եւ Լուիզ Տեմիրճեան 28 քուէով:

**Հաշուեքննիչ Յանձնախումբի** անդամ ընտրուեցաւ՝ Սինտի Բասարլ 26 քուէով (երեք տարուայ համար):

Ուստի կը խնդրեմ Ձերդ Սրբազնութենէն որ բարեհաճիք վաւերացնել վերոյիշեալ ընտրութիւնները որպէսզի առիթը ունենանք ծխական խորհուրդի մոր դիւանը ընտրելու հնարաւոր փութով: Ընդունեցէք մեր կանխապայտ շնորհակալութիւններն ու բարեմաղթանքները:

Յարգանքով՝

*S. Simeon Arp. Oshaganian*

S. Սիմէոն Արք. Օտապաշեան  
 Հոգևոր Հովիւ